ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՀԱՆՐԱՅԻՆ ՁԱՅՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Ավագյան,

ի պատասխան Ձեր 14.07.2026թ. գրության՝ տեղեկացվում է, որ համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգի՝ Երևանի քաղաքապետարանի աշխատակազմում աշխատողներին արձակուրդ տրամադրվում է գործատուին ներկայացված դիմումի հիման վրա, գործատուի ընդունած անհատական իրավական ակտով:

Աշխատակցի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում աշխատողին փոխարինում է համայնքային ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված փոխարինող աշխատակիցը:

Միաժամանակ տեղեկացնում եմ, որ աշխատակիցները գործուղումների մեկնում են Երևանի քաղաքապետի որոշմամբ, որոնց մասին տեղեկատվությունն առկա է Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքում և գործուղման դեպքում նույնպես նշանակվում է փոխարինող անձ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ